Ազգային ունիվերսալիզմը

Հրանտ Տէր-Աբրահամեան

«Պահպանենք մեր մշակույթը» կոչն ամենատարածվածներից է Հայաստանում: Թվում է՝ ոչ մի սխալ դրանում չկա: Սակայն վերլուծելու դեպքում ենթատեքստում կարող է զգացվել «ներքին գաղութատիրության» յուրահատուկ երանգ: Ընդհանրապես, աշխարհում պահպանման ենթակա են համարվում նախ էքզոտիկ էթնիկ խմբերի ազգագրական մշակույթները, որոնք հիմնականում զուրկ են այլևս զարգանալու և առաջընթաց ապրելու ներուժից: Այդ մշակույթների նկատմամբ արտաքուստ բարյացակամ վերաբերմունքը կարելի է կասկածի տակ առնել որպես քողարկված կամ բացահայտ գաղութատիրությանը բնորոշ «մեծական» հովանավորչություն բնիկների հանդեպ: Նույն վերաբերմունքն առկա էր նաև սովետական[1] պաշտոնական հովանավորչության ենթատեքստում տեղական (ոչ ռուսական) մշակույթների հանդեպ: Սովետական համատեքստից էլ փաստացի ժառանգվել է այսօրվա «պահպանենք»-ը: Այստեղ է, ի դեպ, «ազգային»-ի և անկախ Հայաստանի սուր հակադրության հիմնական պատճառը. այսօրվա «ազգայինը» սովետական շրջանում ազգի մասին պատկերացումների շարունակությունն է[2], մինչդեռ անկախ հանրապետության պայմաններում պահանջվում են միանգամայն նոր մոտեցումներ: Վերլուծելու դեպքում նու՛յն թաքնված գաղութատիրական կոդը կարելի է գտնել հայկականի հանդեպ հայաստանյան մտավոր վերնախավի մի զգալի մասի վերաբերմունքում. այն է՝ «ներքին արևելագիտություն»[3]: «Ներքին արևելագիտական» և «պահպանողական» հարացույցներում ազգային մշակույթն ընկալվում է իբրև տեղական յուրահատկություն, «կոլորիտ», «ունիկալություն»:

Նոր կարգախոսը

Նոր ռազմավարության կարգախոսը կարող է լինել ոչ թե պահպանումը, այլ ազգային մշակույթի զարգացումն ու առաջընթացը: Առաջնային է ոչ թե հարուստ կամ աղքատ մշակութային անցյալը, այլ մշակութային ներկան՝ այսօր և այստեղ ստեղծվող արժեքը: Անցյալի մշակութային ժառանգության իրակա՛ն պահպանման, այսինքն՝ կենդանի պահելու միջոցը ոչ թե արխիվացումն է, այլ այսօր-ու-այստեղ ստեղծագործումը՝ ներառյալ անցյալի ժառանգության անընդհատ վերընթերցումն ու վերամեկնաբանումը: Որպեսզի անցյալի ժառանգությունը չվերածվի անկենդան թանգարանի, անհրաժեշտ է մշակութային նորարարության գործընթաց ներկայում: Հարկ է ոչ թե թվալ, ներկայանալ, պատմել պատմություններ մեր մասին, այլ լինել այսօր ու այստեղ:

Ավանդույթ

Թվում է՝ ավանդույթն անցյալն է: Մինչդեռ ավանդույթն առավելապես ներկան է: Անցյալում են միայն սպառված, թանգարանային արժեքները: Ավանդույթը ոչ թե բովանդակություն է, որը կարող է փոփոխական լինել, այլ կառուցվածք[4]: Ավանդույթի էանիշն է փոխանցելիությունը, հաղորդակցման շղթան, որում կարևոր է փոխանցման

համեմատի՛ր

«Գաղութային և հետգաղութային տեսություններում բնիկության խնդիրը հաճախ քննարկվողներից է, և սա պատահական չէ, որովհետև գաղութացնող երկիրը դրա միջոցով կարծես միանգամից երկու նապաստակ էր սպանում: Նախ՝ ցույց էր տալիս իր հետաքրքրվածությունը, ուշադրությունն ու հոգածությունը բնիկների մշակույթի նկատմամբ և երկրորդ՝ ստորադասում էր այն քաղաքակրթությանն ու լուսավորությանը, որի ներկայացուցչի ու տարածողի լուսապսակով, բնական է, հանդես էր գալիս ինքը»:
Աղասի Թադևոսյան. «Հետգաղութային դիսկուրսի խնդիրը հետխորհրդային Հայաստանում», էջ 23:

«Ինչ վերաբերում է այսպես կոչված «ազգային արժեքներին», որոնք մեզանում ձևավորվել են հիմնականում ԽՍՀՄ-ի տարիներին, դրանք նույնպես եղել են ներքին գաղութացման առանցքային գործիքներ և արմատական վերիմաստավորման ու վերանայման կարիք ունեն»:
Նույնի՝ էջ 27:

«Ինչ վերաբերում է խորհրդահայ մտավորականությանը, ապա այս շերտն այդպես էլ չկարողացավ վերիմաստավորել իր նպատակներն անկախ պետականության պայմաններում և ազատվել ներքին գաղութարարի իր գործառույթից»:
Նույնի՝ էջ 27:

«Ստացվում էր այնպես, որ խորհրդային ժողովուրդները, այդ թվում և հայերն իրենց ազգային առանձնահատկության հիմնական շեշտադրումները տեղափոխում էին անցյալ, իսկ ներկայի ու ապագայի ազգային պատկերը միաձուլվում էր խորհրդային ընդհանրականությանը՝ ավագ եղբայր Ռուսաստանի գլխավորությամբ»:
Նույնի՝ էջ 25:

[1] Նախ և առաջ նկատի ունենք ստալինյան և հետստալինյան շրջանները:

[2] Պետք է հաշվի առնել ոչ միայն պաշտոնական սովետականը, այլև կիսապաշտոնականն ու այսպես ասած՝ կիսաայլախոհականը: Առհասարակ՝ «ազգայինի» մասին Սովետական Հայաստանում եղած պատկերացումները, լինելով տարբեր գործոնների ազդեցության ու տարբեր աղբյուրներից փոխառումների համադրման արդյունք, արժանի են առանձին գիտական հետազոտության նախքան դրանք գիտահանրամատչելի կամ հրապարակախոսական վերլուծության հարթությունում ներկայացնելը: Նման հետազոտության իրականացման հավակնություն չունենալով՝ ընդամենը նշում ենք գոյություն ունեցող թեման և խնդիրը:

[3] Այս պնդումն առավել ակներև է ռուսական կրթություն ստացած մտավորականության դեպքում: Համեմատաբար բարդ է հայկական կրթությամբ մտավորականների պարագան, սակայն այստեղ էլ հիմնականում նույն մոդելն է գերակայում՝ իր տարատեսակներով հանդերձ: Սրանք իհարկե նախնական պնդումներ են, մինչդեռ ավելի վստահ խոսելու համար անհրաժեշտ են համապատասխան ուսումնասիրություններ:

[4] Հայկական ավանդույթի կառուցվածքը, Արտաշիսյանների հելլենիստական մշակութային քաղաքականությունից ու հինգերորդ դարի լուսավորիչներից մինչև Չարենց, արևմտյան մշակույթի մեջ ներգծված լինելն է: Տարբեր պատմական փուլերում այդ ներգծվածությունը կարող է տարբեր, որոշ դեպքերում՝ հակադիր բովանդակություն արտադրել, սակայն բուն կառուցվածքը մնում է անփոփոխ:

մեխանիզմի անընդհատությունն անցյալից ներկա: Գալով անցյալից՝ ավանդույթը ձևավորում է ներկան: Այդ իսկ պատճառով կարևորագույն խնդիրն ավանդույթի վերարտադրությունն է ներկայում, այլ ոչ թե նրա գոյությունն անցյալում: Այլ կերպ ասած՝ ավանդույթը գործընթաց է, որն անընդհատ շարժման մեջ է: Այս իմաստով այն նմանվում է բայի պերֆեկտային ձևի ներկային, որը կազմված է անցյալ դերբայի և օժանդակ բայի ներկա ժամանակներից: Այսինքն՝ խոսքը ոչ թե սովորական, այլ ներկայի հետ կապ ունեցող՝ ներկայում ակտուալ անցյալի մասին է:

Հետևաբար խոսքը մշակութային ժառանգության անտեսման մասին չէ, ոչ էլ, առավել ևս, ինքնանպատակ «այժմեականության»: Երբ ասում ենք՝ կարևորը մշակութային ներկան է, նկատի ունենք, որ կարևորը ոչ թե մշակութային անցյալով հպարտանալն է, այլ մշակութային ժառանգության լինելիությունն այսօր, որով մշակութային անցյալը վերածվում է ներկայի՝ այսօրվա մշակութային գործընթացի կենդանի մասի:

Ինձ հայտնի չէ «հայկական ավանդույթ» հասկացության այլ՝ ավելի հստակ սահմանում, քան այն, որ 2000 տարվա ընթացքում հայկականությունը եղել է աշխարհին համահունչ լինելու, քաղաքակրթության զարգացմանը համընթաց քայլելու հաջողված փորձ: Ավելի կոնկրետ. հայկականությունը, իր ամբողջ ուրույնությամբ հանդերձ, եղել է «արևմտյան» արժեքային համակարգի մաս: «Հայկական ավանդույթ» հասկացության այլ իմաստներով օգտագործումը, ըստ իս, անորոշ է և կոնկրետությունից զուրկ, հետևաբար՝ անիմաստ:

Եւ ընդ այս մի որ զարմասցի, եթէ բազում ազգաց լեալ մանաւանդ Պարսից եւ Քաղդէացւոց, յորս առաւել ազգիս մերոյ գտանին բազում ինչ իրաց յիշատակք, մեք զՅունացս միայն յիշեցաք զպատմագիրս, եւ անտի զյայտարարութիւն մերոյ ազգաբանութեանս խոստացաք յանդիման կացուցանել:

Ազգայինը

Ազգայինը չի կարող նույնացվել ազգագրականի հետ. տարազ, ուտեստ, ֆոլկլորային երգեր, ժողովրդական էպոս, հեքիաթներ և այլն՝ սրանք կարող են ազգայինի մասը լինել: Սակայն բուն ազգայինը գրավոր և «բարձր մշակույթն»[5] է: Այլ կերպ ասած՝ ազգայինը յուրահատուկը չէ, տեղական երանգավորումը (կոլորիտը) չէ, «հաց-պանիր, ոսկե ծիրան, տատիկ-պապիկ, սառնորակ ջուր ու գյուղական լավաշ»-ը չէ: Այդ բոլորը լավ է, բայց անբավարար ոչ միայն ազգայինը ամբողջացնելու, այլև առհասարակ ձևավորելու համար: Իրոք, վերցնենք նոր շրջանի հայ մշակույթի բոլորի կողմից ճանաչված արժեքները: Օրինակ, ազգայի՞ն է արդյոք Արամ Խաչատրյանի երաժշտությունը, հայկակա՞ն է, թե՞ ոչ: Եթե նույնիսկ նրա գործերում գտնենք որոշ «տեղական յուրահատկություններ», միևնույն է, դրանք եվրոպական դասական երաժշտության անքակտելի մաս են: Մինչդեռ դասական երաժշտությունը չի ստեղծվել Հայաստանում, վերջինս չի մասնակցել դրա կայացմանը, իսկ ներմուծվել է Հայաստան բավական ուշ՝ 19-րդ դարում: Հետևաբար ի՞նչ, Խաչատրյանն այլևս հայ ազգային երգահան չէ՞: Այդ դեպքում ազգային չեն Չայկովսկին, Դվորժակը և շատ ուրիշներ: Այնինչ Խաչատրյանը ոչ միայն ազգային է, այլև որոշ իմաստով ավելի ազգային, քան, ասենք, աշուղ Ջիվանին:

Քննենք օրինակներ այլ ոլորտներից: Օրինակ՝ Մարտիրոս Սարյանը, որն իհարկե պատկերել է հայաստանյան բնություն, փորձել արտահայտել հայկական բնապատկերի տիպականը, սակայն այն ձևը, որում ստեղծագործել է, նույնքան ունիվերսալ է, որքան Խաչատրյանի երաժշտությունը:

Օրինակներ հիշենք գրականությունից. ո՞րն է տեղական ուրույնությունը Վարուժանի, Չարենցի, Մեծարենցի բանաստեղծություններում: Վարուժանն ու Չարենցը գոնե գրել են նաև հայրենասիրական թեմաներով[6], սակայն Մեծարենցն անգամ այդ չի արել:

«Չենք կարող Գիրքը թողնել և սնոտի ավանդույթներին հետևել»:
«Հատվածներ Ներսես Լամբրոնացու նամակից Լևոն Ա (Բ) թագավորին», էջ 30:

«Անհրաժեշտ էր ինչ-որ կերպ լուծել ազգային առանձնահատկության խնդիրը: Ահա այս պատճառով ազգայինի խորհրդահայկական մշակութային շերտը լրացվում էր բնիկային մշակութային շերտով: Բնիկային շերտի ձևավորման գործընթացին հաջողությամբ ծառայեցվում էր ազգագրությունը, որը ԽՍՀՄ-ում վերածվել էր գլխավորապես 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի մշակութային շերտը նկարագրորեն վերարտադրող գիտության»:
Աղասի Թադևոսյան. «Հետգաղութային դիսկուրսի խնդիրը հետխորհրդային Հայաստանում», էջ 24:

[5] Չէինք ցանկանա խորասուզվել «բարձր մշակույթ» եզրի սահմանման և կիրառելիության վեճի մեջ: Նշենք ընդամենը, որ նկատի ունենք զուտ ազգագրական մշակույթին հակադիր, հիմնականում ունիվերսալ արմատներ և ձևեր ունեցող մշակութային միավորները՝ գիտություն, արվեստ, գրականություն: Այսքանը բավական է մինչարդիական իրավիճակը նկարագրելու համար: Արդիական և հետարդիական իրավիճակներն ավելի բարդ են, և, ըստ երևույթին, պետք է նկատի ունենանք նաև «բարձր» և պոպուլյար մշակույթի հակադրությունը: Ընդ որում՝ թեպետ թվում է, թե պոպուլյարը (օրինակ՝ հեռուստասերիալը կամ փոփ երաժշտությունը) ավելի ժողովրդավարական է, սակայն, հաճախ, հենց պոպուլյարն էլ դառնում է վերնախավի գործիքը զանգվածներին կառավարելու գործում:

[6] Հասկանալի է, որ հայրենասիրական ժանրում գրելն էլ տեղական առանձնահատկություն չի կարող համարվել: Դա էլ ունիվերսալ ձև է, ընդ որում՝ գերազանցապես եվրոպական նոր գրականության մեջ մշակված. Նարեկացին, օրինակ, չէր գրում հայրենասիրական բանաստեղծություններ, ոչ էլ նույնիսկ Սայաթ-Նովան:

մեխանիզմի անընդհատությունն անցյալից ներկա: Գալով անցյալից՝ ավանդույթը ձևավորում է ներկան: Այդ իսկ պատճառով կարևորագույն խնդիրն ավանդույթի վերարտադրությունն է ներկայում, այլ ոչ թե նրա գոյությունն անցյալում: Այլ կերպ ասած՝ ավանդույթը գործընթաց է, որն անընդհատ շարժման մեջ է: Այս իմաստով այն նմանվում է բայի պերֆեկտային ձևի ներկային, որը կազմված է անցյալ դերբայի և օժանդակ բայի ներկա ժամանակներից: Այսինքն՝ խոսքը ոչ թե սովորական, այլ ներկայի հետ կապ ունեցող՝ ներկայում ակտուալ անցյալի մասին է:

Հետևաբար խոսքը մշակութային ժառանգության անտեսման մասին չէ, ոչ էլ, առավել ևս, ինքնանպատակ «այժմեականության»: Երբ ասում ենք՝ կարևորը մշակութային ներկան է, նկատի ունենք, որ կարևորը ոչ թե մշակութային անցյալով հպարտանալն է, այլ մշակութային ժառանգության լինելիությունն այսօր, որով մշակութային անցյալը վերածվում է ներկայի՝ այսօրվա մշակութային գործընթացի կենդանի մասի:

Ինձ հայտնի չէ «հայկական ավանդույթ» հասկացության այլ՝ ավելի հստակ սահմանում, քան այն, որ 2000 տարվա ընթացքում հայկականությունը եղել է աշխարհին համահունչ լինելու, քաղաքակրթության զարգացմանը համընթաց քայլելու հաջողված փորձ: Ավելի կոնկրետ. հայկականությունը, իր ամբողջ ուրույնությամբ հանդերձ, եղել է «արևմտյան» արժեքային համակարգի մաս: «Հայկական ավանդույթ» հասկացության այլ իմաստներով օգտագործումը, ըստ իս, անորոշ է և կոնկրետությունից զուրկ, հետևաբար՝ անիմաստ:

Եւ ընդ այս մի որ զարմացի, եթէ բազում ազգաց լեալ մանաւանդ Պարսից եւ Քաղդէացւոց, յորս առաւել ազգիս մերոյ գտանին բազում ինչ իրաց յիշատակք, մեք զՅունացն միայն յիշեցաք զպատմագիրս, եւ անտի զյայտարարութիւն մերոյ ազգաբանութեանս խոստացաք յանդիման կացուցանել:

Ազգայինը

Ազգայինը չի կարող նույնացվել ազգագրականի հետ. տարազ, ուտեստ, ֆոլկլորային երգեր, ժողովրդական էպոս, հեքիաթներ և այլն՝ սրանք կարող են ազգայինի մասը լինել: Սակայն բուն ազգայինը գրավոր և «բարձր մշակույթ»[5] է: Այլ կերպ ասած՝ ազգայինը յուրահատուկը չէ, տեղական երանգավորումը (կոլորիտը) չէ, «հաց-պանիր, ոսկե ծիրան, տատիկ-պապիկ, սառնորակ ջուր ու գյուղական լավաշ»-ը չէ: Այդ բոլորը լավ է, բայց անբավարար ոչ միայն ազգայինը ամբողջացնելու, այլև առհասարակ ձևավորելու համար: Իրո՛ք, վերցնենք նոր շրջանի հայ մշակույթի բոլորի կողմից ճանաչված արժեքները: Օրինակ, ազգայի՞ն է արդյոք Արամ Խաչատրյանի երաժշտությունը, հայկակա՞ն է, թե՞ ոչ: Եթե նույնիսկ նրա գործերում գտնենք որոշ «տեղական յուրահատկություններ», միևնույն է, դրանք եվրոպական դասական երաժշտության անքակտելի մաս են: Մինչդեռ դասական երաժշտությունը չի ստեղծվել Հայաստանում, վերջինս չի մասնակցել դրա կայացմանը, իսկ ներմուծվել է Հայաստան բավական ուշ՝ 19-րդ դարում: Հետևաբար ի՞նչ, Խաչատրյանն այլևս հայ ազգային երգահան չէ՞: Այդ դեպքում ազգային չեն Չայկովսկին, Դվորժակը և շատ ուրիշներ: Այնինչ Խաչատրյանը ոչ միայն ազգային է, այլև որոշ իմաստով ավելի ազգային, քան, ասենք, աշուղ Ջիվանին:

«Չենք կարող Գիրքը թողնել և սնոտի ավանդույթներին հետևել»: *«Հատվածներ Ներսես Լամբրոնացու նամակից Լևոն Ա (Բ) թագավորին», էջ 30:*

«Անհրաժեշտ էր ինչ-որ կերպ լուծել ազգային առանձնահատկության խնդիրը: Ահա այս պատճառով ազգայինի խորհրդահայկական մշակութային շերտը լրացվում էր բնիկային մշակութային շերտով: Բնիկային շերտի ձևավորման գործընթացին հաջողությամբ ծառայեցվում էր ազգագրությունը, որը ԽՍՀՄ-ում վերածվել էր գլխավորապես 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի մշակութային շերտը նկարագրորեն վերարտադրող գիտության»:
Աղասի Թադևոսյան. «Հետգաղութային դիսկուրսի խնդիրը հետխորհրդային Հայաստանում», էջ 24:

Քննենք օրինակներ այլ ոլորտներից: Օրինակ՝ Մարտիրոս Սարյանը, որն իհարկե պատկերել է հայաստանյան բնություն, փորձել արտահայտել հայկական բնապատկերի տիպականը, սակայն այն ձևը, որում ստեղծագործել է, նույնքան ունիվերսալ է, որքան Խաչատրյանի երաժշտությունը:

Օրինակներ հիշենք գրականությունից. ո՞րն է տեղական ուրույնությունը Վարուժանի, Չարենցի, Մեծարենցի բանաստեղծություններում: Վարուժանն ու Չարենցը գոնե գրել են նաև հայրենասիրական թեմաներով[6], սակայն Մեծարենցն անգամ այդ չի արել:

[5] Չէինք ցանկանա խորասուզվել «բարձր մշակույթ» եզրի սահմանման և կիրառելիության վեճի մեջ: Նշենք ընդամենը, որ նկատի ունենք զուտ ազգագրական մշակույթին հակադիր, հիմնականում ունիվերսալ արմատներ և ձևեր ունեցող մշակութային միավորները՝ գիտություն, արվեստ, գրականություն: Այսքանը բավական է մինչարդիական իրավիճակը նկարագրելու համար: Արդիական և հետարդիական իրավիճակներն ավելի բարդ են, և, ըստ երևույթին, պետք է նկատի ունենանք նաև «բարձր» և պոպուլյար մշակույթի հակադրությունը: Ընդ որում՝ թեպետ թվում է, թե պոպուլյարը (օրինակ՝ հեռուստասերիալը կամ փոփ երաժշտությունը) ավելի ժողովրդավարական է, սակայն, հաճախ, հենց պոպուլյարն էլ դառնում է վերնախավի գործիքը զանգվածներին կառավարելու գործում:

[6] Հասկանալի է, որ հայրենասիրական ժանրում գրելն էլ տեղական առանձնահատկություն չի կարող համարվել: Դա էլ ունիվերսալ ձև է, ընդ որում՝ գերազանցապես եվրոպական նոր գրականության մեջ մշակված. Նարեկացին, օրինակ, չէր գրում հայրենասիրական բանաստեղծություններ, ոչ էլ նույնիսկ Սայաթ-Նովան:

Եւ մեր Զարմայր […] անդ ի քաջացն Հելլենացւոց
վիրաւորեալ մեռանի. այլ կամիմ յԱքիլլեայ, եւ մի յայլմէ
ումեքէ ի քաջացն:

Արդյո՞ք ազգային չեն այս բանաստեղծները, որոնք ստեղծագործել են եվրոպական բանաստեղծական համաժամանակյա ձևերի, թեմաների և ուղղությունների տիրույթում: Միգուցե նաև այդքան ազգային համարվող Խաչատուր Աբովյա՞նը կամ Ռաֆֆի՞ն է ստեղծել վեպի ժանրն աշխարհում: Ո՛չ, նրանք ընդամենը վերցրել են այն, ինչ ստեղծվել է Եվրոպայում, և միակ տարբերակիչը նրանց գործերի հայերեն լինելն ու հայկական թեմատիկան շոշափելն է:

Եթե նոր ժամանակների օրինակները բավարար չեն, կարող ենք տեսնել, թե ինչպես էր իրավիճակը միջնադարում. գուցե այստե՞ղ է թաքնված անորսալի «իսկական ազգայինը»: Իրականում, սակայն, միջնադարյան իրողությունը շատ չի տարբերվում նոր ժամանակներից: Հայ միջնադարյան մշակույթի ամենանշանակալի զարգացում ապրած ճյուղերից էին պատմագրությունն ու աստվածաբանությունը: Ո՛չ մեկը, ո՛չ մյուսը չի ստեղծվել Հայաստանում: Երկուսի գիտական ապարատն ու հիմքում ընկած մտածողությունը ներմուծված են: Այլ բան է, որ հնարավոր է եղել ձևավորել պատմագրության և աստվածաբանության հայկական դպրոց: Չնայած օտար ծագմանը՝ հենց այս երկու բնագավառներում են Խորենացու, Եղիշեի, Կողբացու, Նարեկացու, Շնորհալու, Տաթևացու և այլոց կողմից ստեղծվել ամենալայն ճանաչում ստացած ազգային արժեքները: Յուրահատուկ կարող են համարվել միջնադարյան հայ մանրանկարչությունը, պոեզիան, երաժշտությունը, ճարտարապետությունը[7]: Սակայն բոլոր այս ճյուղերի ճանաչված գլուխգործոցները ստեղծվել են արևմտյան քաղաքակրթական դաշտում ընթացած մշակութային երկխոսության շնորհիվ[8]:

«Ապազգային» ազգայինը

Ստացվում է հարակարծ իրավիճակ: Ազգայինն «ապազգային» է և «ապազգայինն» է: Այս հարակարծությունն իհարկե թվացյալ է և հեշտորեն լուծվում է, երբ տեղի չի ունենում ազգայինի և ազգագրականի նույնացում: Կարող ենք ձևակերպել հարակարծ թվացող մեկ այլ թեզ. ազգայինն ունիվերսալն է և ոչ՝ տեղականը: Ազգայինն այն է, ինչը տվյալ երկրի մշակույթն օժտում է ունիվերսալ չափմամբ: Հենց համամարդկային մշակույթի համատեքստում ստեղծված արժեքներն են դառնում ազգային:

«Բայց շնորհն Աստծո զորացրեց ինձ՝ նրանց սնոտի այս ավանդությունը գիտությամբ արհամարհել»: *«Հատվածներ Ներսես Լամբրոնացու նամակից Լևոն Ա (Բ) թագավորին», էջ 29:*

5-րդ դարում Մաշտոցի աշակերտների սերունդը, սովորելով արտերկրում, Հայաստան բերեց հելլենական գիտությունը, վերածեց հայերենի, իսկ հայերենը՝ համամարդկային արժեքներ փոխանցող ու արարող գործիքի: Նրանք ստեղծեցին մի հարացույց, որով ցայսօր ընթանում է մեր մշակույթը՝ անկախ նրանից՝ գիտակցաբար է դա արվում, թե ոչ: Եթե չլիներ մեր մշակութային ավանդության արհեստական աղավաղումը «կոսմոպոլիտիզմի դեմ» ստալինյան պայքարի շրջանակներում, շատ հնարավոր է, որ 20-րդ դարում էլ ունենայինք մշակութային մեծ վերածնունդ, ինչի սաղմերը նշմարվում էին 20-րդ դարի առաջին քառորդում: Հետաքրքրական է, որ 5-րդ դարի սերունդը խիստ քննադատության էր ենթարկվում իրեն ժամանակակից «ազգային պահպանողականների» կողմից, որոնք հանդես էին գալիս «պապենական ավանդույթի» պաշտպանության դիրքերից:

Ունիվերսալ լեզվով ստեղծված գործերն առավել ազգային են, քան նրանք, որոնք ստեղծվում են ազգագրական-տուրիստական կամ հետարդիական էթնիկ ոճերում:

[7] Այստեղ, սակայն, մի կարևոր նրբություն կա. «մշակույթի պահպանման» տիրապետող առասպելույթի սահմաններում իր ժամանակի ունիվերսալ չափման մեջ ստեղծված և այդ չափումը հաստատող ազգային ժառանգությունը ենթարկվում է «ազգագրականացման»: Եվ հոգեբանական ներքին ընկալման, և՛ դեպի արտաքին աշխարհն ուղղված ինքնաներկայացման հարթություններում Նարեկացին, Գառնիի տաճարը, Գեղարդի վանքն ու Չարենցը հաց-պանիր-կանաչու, զուռնա-դհոլի հետ միասին նույն շարքում են դրվում: Այս գործընթացի կարևոր մասն ազգային բարձր մշակույթի արժեքների ծիսականացումն ու սրբացումն է: Վերջիններիս իրական բովանդակությունը ոչ ոքի առանձնապես չի հետաքրքրում. այն քննարկման, վերլուծության և վերանայման, այսինքն՝ բանականությամբ բնութագրվող գործընթացների առարկա չէ, այլ ուղղակի դատարկ նշան, իրարից ոչնչով չտարբերվող «մեծերի» անդեմ ու անվերջ շարան:

[8] Բնականաբար, ներմուծման և մշակութային փոխառության հիշատակումը չի կարող նսեմացնել հայկական մշակույթը: Ի վերջո ամբողջ արևմտյան մշակույթն է փոխառություն հին հունականից: Սակայն հարցը նաև այն չէ, թե «բոլոր ազգերն էլ փոխառել ու ազդվել են միմյանցից», այլ այն, որ հայկական մշակույթն արևմտյան մշակույթի հարազատ մասն է, և մեր ազգայինը հենց արևմտյանն է:

Զայն ժամանակաւ ձի մի էր երիվար արքային Տիրանայ, զորմէ զարմանային: Եւ էր ձին գունով ճարտուկ ճանճկէն. սա լի էր քաջութեամբ, անուանի եւ հոյակապ, մեծ եւ բարձր՝ երկայն քան զամենայն ձիս:

Մշակութաստեղծ գործունեությունը չպետք է իր ուժերը զուր տեղը վատնի մտացածին «ճշմարիտ ազգայինի» (իմա՝ ազգագրականի և էթնիկի) փնտրտուքի վրա: Այն պետք է ստեղծի ունիվերսալ արժեքներ, որոնք ազգային կլինեն ինքնըստինքյան, քանի որ ստեղծվել են Հայաստանում և հայերեն:

Գագիկ թագավոր ծեր, ալևոր էր.
Չինք շա՛տ հարըստություն ուներ,
Չարմ ու զավակներ չուներ.
Մեկ աղջիկ ուներ, շատ տեսակով,
Անուն՝ Ծովինար խանում:

Ավանդու՞յթ, թե՞ ադաթ

Մեր «ազգայինի» պահպանման մասին խոսելիս հաճախ նկատի է առնվում ոչ թե բուն ազգայինը՝ արդեն հիշատակված Խորենացին, Եղիշեն (որոնցից սովետահայ ժողովուրդն առանձնապես տեղյակ էլ չէ) կամ Աբովյանը, Չարենցն ու Մեծարենցը, այլ կենցաղային նորմերի այն ամբողջությունը, որն «ադաթ» է կոչվում:

«Ադաթ» բառը փոխառված է իսլամական միջավայրից: Սա արդեն կասկածանքի տեղիք է տալիս. ստացվում է, որ իբրև «ազգային ավանդական» ընկալվող նորմերն անվանող բառն օտար ծագում ունի (էլ չասած, որ օտարն էլ հիմնականում բացասաբար ընկալվող իսլամն է):

«Այսպիսով ամփոփում ենք, որ ՀՀ-ն մի երկիր է, որտեղ քրիստոնեական կամ «ֆրանսիական» «եղբայրությունը» ոտնատակ եղավ «ախպերության» սրածայր կոշիկների տակ, ազատությունը փոխարինվեց էքզոտիկ հիմարություններ կատարելու վճարովի հաճույքով, իսկ հավասարությունն ընդհանրապես դուրս մղվեց հանրային շրջանառությունից»:
Արմեն Հովհաննիսյան. «Հեղափոխություն հանուն պահպանման», էջ 54:

Սակայն հարցն ավելի խորն է: Ավանդական աշխարհայացքը և վարքի նորմերը, որոնք հայերը, հետևելով իսլամական աշխարհում ընդունված եզրաբանությանը, կոչում են ադաթ, իհարկե ավելի հին են, քան իսլամը: Հետաքրքիրն այն է, որ աշխարհում թերևս չկա ավելի ունիվերսալ երևույթ, քան ադաթը, որը հայրիշխանական բոլոր հասարակությունների սովորական իրավունքն է և տարածված է պապուասներից մինչև Հին Հռոմ ու հեթանոսական Հայաստան՝ անշուշտ, տարածքին և ժամանակին համապատասխան որոշակի ձևափոխումներով: Չկա մի երկիր, որում այդ նորմերը չեն գործել անցյալում կամ գոնե մասամբ չեն գործում ցայսօր: Ադաթի մեջ նույնիսկ ավելի քիչ տեղային առանձնահատկություն կա, քան «բարձր մշակույթում»:

Եթե հեթանոսական Հայաստանի մասին պատկերացումները քաղենք Դանիել Վարուժանի բանաստեղծություններից, որոնք իրականում ոչ այլ ինչ են, քան դեպի անցյալ ուղղված ուտոպիա, կարող ենք զարմանալ, որ հեթանոսական Հայաստանը հայրիշխանական երկիր է եղել, և ավանդական բարոյականության նորմերն օտարամուտ քրիստոնեությունը չէ, որ սահմանել է. դրանք եղել են Հայաստանում ի սկզբանե, ինչպես և երկրագնդի ցանկացած երկրում: Ազատ սեր, մերկ աղջիկներ, կուսության կորուստ ամուսնությունից առաջ և հիփիական այլ կայֆեր ամենևին էլ ընդունված չեն եղել Գողթան գավառում և նրա սահմանամերձ գոտիներում, ինչպես կարող են կարծել նեոռոմանտիզմի գրականության ավանդույթով դաստիարակված դյուրազգաց պատանիները: Սա հասկանալու համար պարտադիր չէ խորանալ պատմական աղբյուրների մեջ, այլ բավական է հիշել, որ հին Հայաստանը գտնվել է երկիր մոլորակի վրա, հետևաբար ենթարկվել է համաշխարհային պատմության բոլոր օրինաչափություններին: Հեթանոսական ազատ բարքերի մասին պատկերացումները հետևանք են Հռոմի կայսերական շրջանի այլասերված բարքերի մասին չափազանցված նկարագրությունների ընթերցման և այդ ընթերցման ընդհանրացման: Սակայն կայսերական Հռոմի մեծ քաղաքների վարքն ու բարքն ամենևին պետք չէ շփոթել հնագույն հռոմեական խիստ հայրիշխանական և ադաթավոր կանոնների հետ: Առավել ևս չի կարելի այդ պատկերացումները տարածել հին Հայաստանի պես երկրների վրա, որտեղ մեծ քաղաքները երբեք այդքան նշանակալի դեր չեն կատարել, և որտեղ հայ բնակչության մեծ մասն ապրում էր ավանդական կյանքով՝ գյուղերում և փոքր ամրոցներում[9]:

Հետևաբար հանգում ենք մեկ այլ հարակարծության. ադաթում ևս չկա ազգային կամ

[9] Հետաքրքիր է, որ ժամանակակից քրիստոնյաները կարծում են, թե ավանդական բարոյականությունն իրենց գյուտն է և իրենց պաշտպանության առարկան: Մինչդեռ դա քրիստոնեության այն տարրերից է, որը ժառանգվել է կրոնական և գաղափարական նախորդ համակարգերից: Իսկ այն նորը, որը բերել է քրիստոնեությունը, հենց ավանդական հայրիշխանական նորմերի մեղմումն է, ինչի շնորհիվ էլ, օրինակ, հոր լիակատար իշխանությունը կնոջ և երեխաների վրա (կյանքը խլելու իրավունքով) այսօր որպես բարբարոսություն ենք ընկալում: Եվ եթե ավանդական բարոյականությունը կամ ադաթը դեռ տիրապետող է Հայաստանում, պատճառն այն չէ, որ մենք հին քրիստոնյա ենք, այլ հակառակը, քանի որ մեծամասամբ դեռ հեթանոս ենք և համարում ենք, որ, օրինակ, ամուսնու դավաճանությունը տղամարդկություն է, իսկ կնոջ դավաճանությունը՝ բոզություն, և կամ բարոյականությունը նույնացնում ենք միմիայն սեռական վարքի հետ:

Եւ ասէ Վարազ, Աղէ՝ տեսէ՛ք ածուղ, որով երկաթ շողացուսցուք, զի զաչս խարեսցուք զարքայիս Հայոց: Եւ անդէն բերին ածուղ, որով խարէին զաչսն Տիրանայ:

նույնիսկ ազգագրական երանգավորում և առանձնահատկություն: Եվ ոչ միայն բառի՝ իսլամական մշակույթից փոխառված լինելու պատճառով, այլև ադաթի՝ որպես հայրիշխանական ավանդական, սովորական իրավունքի՝ համաշխարհային տարածում ունենալու պատճառով: Այսպիսով՝ ադաթն ավելի՛ պակաս «յուրահատուկ» է, քան «բարձր մշակույթը»:

Մշակութային ժառանգությունը և հայ մշակույթի կառուցվածքը

Սկսած դեռ Արտաշիսյանների հելլենիզմից և 5-րդ դարի լուսավորչականությունից՝ հայկականությունը միշտ եղել է արևմտյան քաղաքակրթության բաղկացուցիչ մաս[10]: Նոր ժամանակներում այս ավանդույթը շարունակվել է: Այսպես, Պոլսի և Թիֆլիսի, իսկ հետագայում նաև 20-30-ականների Երևանի մշակութային, հատկապես գրական սերունդը ներգծված է եղել համաշխարհային միտումներում և զարգացել է դրանց համընթաց: Սա է պատճառը, որ հենց այդ սերնդի կողմից են ստեղծվել ամենալայն ճանաչում ստացած արժեքները, որոնք հպարտությամբ կոչում ենք «ազգային»: Այս ավանդույթն ընդհատվեց ստալինյան բռնապետության կայացմանը զուգահեռ և վերջնական ձևակերպում ստացավ 40-ականներին: Նախ ոչնչացվեցին Արևելյան Հայաստանի մշակույթի առաջատար դեմքերը[11]: Սակայն նույնիսկ ֆիզիկական ոչնչացումն ամենամեծ հարվածը չէր: Ստալինյան գաղափարախոսությունը, հիմնված «կոմունիզմը մեկ երկրում կառուցելու» թեզի և «թշնամիներով շրջապատված լինելու» տագնապի վրա, երկիրը տարավ դեպի մեկուսացում՝ և՛ քաղաքական, և՛ մշակութային: Միաժամանակ՝ երկրի ներսում ստալինյան ռեժիմը դրսևորվեց որպես տիպիկ թերմիդոր՝ թաքնված հակահեղափոխական և պահպանողական ռեակցիա: Սա հանգեցրեց մշակույթում առաջադիմական մղումների ճնշմանը և կեղծ դասականության հաստատմանը: Բացի այդ՝ 30-ականների վերջից աստիճանաբար սկսեց գլուխ բարձրացնել նորաթուխ կայսերական «պատրիոտիզմը»՝ ռուսական շովինիզմը: Այս գործընթացն իր ավարտին հասավ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում և անմիջապես դրանից հետո: Ռուսական պատրիոտիզմը պատճենվեց սովետական հանրապետություններում՝ ի դեմս տեղական «հայրենասիրությունների»: Հետաքրքիր է, որ 1937թ. նույն Չարենցին, Բակունցին և այլոց գնդակահարում էին ազգայնականության մեջ կեղծ մեղադրանքներով: Բայց չանցած մի քանի տարի՝ գնդակահարությունը ողջունող և ազգայնականությունը դատապարտող գրողների բանակը կոմկուսի թելադրանքով անցավ պաթետիկ հայրենասիրական երկերի արտադրությանը. երկեր, որոնց զգալի մասը գռեհիկ անճաշակության դրսևորում էր, ինչպես ստալինյան և հետստալինյան սովետական պոեզիայի մեծ մասը: 1940-ականներին ծավալված «կոսմոպոլիտիզմի», իսկ իրականում՝ ունիվերսալիզմի դեպ պայքարն ավարտուն տեսքի բերեց սովետական այս նոր գաղափարախոսությունը, որն ընդամենը փոխարինելու եկավ արդեն ծիսականի վերածված հեղափոխականությանը և սոցիալիզմին[12]:

Ստալինյան շրջանի կեղծ հայրենասիրության հարացույցը գործում է ցայսօր. ազգայինի հակադրությունն ունիվերսալին համարվում է ինքնըստինքյան հասկանալի՝ ազգայինը որոնվում է տեղական կոլորիտում:

Արդյունքն այն է, որ հայկական մշակույթն առաջին անգամ իր պատմության մեջ հայտնվել է աշխարհից մեկուսացման պայմաններում, կորցրել իր համընթացությունն ունիվերսալ մշակութային միտումներին: Մինչ օրս կենդանի է Սովետական Հայաստանում մշակութային աննախադեպ ծաղկման առասպելը: Մինչդեռ ծիծաղելի է

ՉԷ՛, ասին, թե էն մեր հեր ըլներ, Խալխըն մեզ բիճ չէին ասի:

«Ահա թե ինչու, չնայած ԽՍՀՄ-ի շրջանում Խորհրդային Հայաստանի լուսավորմանն ու զարգացմանը, այն, միևնույն է, պահպանում էր իր ծայրագավառային բնույթը՝ ընդունելով քաղաքակրթական ընդօրինակելի կենտրոնի գերակա կարգավիճակը»:
Աղասի Թադևոսյան. «Հետգաղութային դիսկուրսի խնդիրը հետխորհրդային Հայաստանում», էջ 25:

[12] «Սամոբիտնոսծ»-ի կեղծ հայրենասիրական հարացույցը ոչ միայն կործանիչ դեր ունեցավ արվեստի, գրականության և հումանիտար գիտությունների զարգացման հարցում, բայցև հասցրեց ավերածություններ գործել նույնիսկ բնական գիտություններում: Արտասահմանյան ազդեցությունը սկսեց դիտարկվել որպես թերի: Փորձ էր արվում ամեն ինչում ապացուցել տեղական արմատների առկայությունը՝ հնագիտությունից մինչև գրականագիտություն: Ե՛վ մշակութային արտադրանքը, և՛ մշակութային հետազոտությունները կտրվեցին իրենց համատեքստից: Գրողի մասին որևէ լավ բան ասած լինելու համար հարկ էր ժխտել նրա կապը համաշխարհային, հատկապես եվրոպական գրականության հետ:

Ապա տուեալ պատասխանի Տիրանայ, եթէ անօգուտ է ինձ եւ անպատշաճ է՝ կուրութեամբ, անմարթ իսկ է կարի, ունել զթագաւորութիւն՝ բայց փոխանակ իմ թագաւորեցո զԱրշակ զորդի իմ:

խոսել այդ մասին մի երկրում, որում համաշխարհային գրականության կեսն արգելված էր, իսկ մյուս կեսը՝ անհասանելի: Ծիծաղելի է խոսել նաև այն պատճառով, որ մշակույթն իրականում մահանում է մեկուսացման պայմաններում: Սովետական Հայաստանը լավագույն դեպքում մշակութային ջերմոց էր, բայց երբեք ոչ լիարժեք մշակութային այգի: Զարմանալի չէ, որ ջերմոցի տիրոջ մահվանից հետո աճեցված բույսերն այդքան անպտուղ դուրս եկան և չկարողացան անկախության պայմաններում համարժեք և մրցունակ արտադրանք ստեղծել[13]: Ինչ վերաբերում է Սովետական Հայաստանում 60-ականներից ստեղծված իրական մշակութային արժեքներին, ապա երբեք պետք չէ մոռանալ, որ դրանց մեծ մասը ստեղծվել է ոչ թե շնորհիվ, այլ ի հակադրություն պաշտոնականի:

Այսօրվա մեր ռազմավարությունը պետք է լինի մշակութային ընդհատված ավանդույթի բուն կառուցվածքին վերադարձը և ազգայինի վերաձևակերպումը՝ որպես ունիվերսալ, առաջադիմական և նորարար չափում՝ ի հակադրություն ազգագրականի՝ «ներքին արևելագիտության»:

«Ինչ վերաբերում է խորհրդահայ մտավորականությանը, ապա այս շերտն այդպես էլ չկարողացավ վերահիմաստավորել իր նպատակներն անկախ պետականության պայմաններում և ազատվել ներքին գաղութարարի իր գործառույթից: Այս խավի ներկայացուցիչներից շատերը դեռևս ապրում ու գործում են խորհրդահայկական «ազգային» արժեքային ու մշակութային հարթություններում՝ հաճախ ստեղծելով մշակութային դատարկ ֆորմաներ ու տեքստեր: Պատահական չէ, որ այդ մտավորականության մի մասն ընդհանրապես հեռացավ մտավոր գործունեության ոլորտից»:
Նույնի՝ էջ 27:

«Հայաստանի վերահաստատումը որպես հայկական ազգային ինքնիշխան պետություն, հստակ ձևակերպված ու վերապահումներ չճանաչող սահմանադրական կարգը, ներկայացուցչական և ուղիղ ժողովրդավարության սկզբունքները համադրող կառավարումը, բացարձակ քաղաքացիական ու իրավական հավասարությունն ամենևին պահպանողական, սոցիալիստական կամ ազատական արժեքներ չեն, այլ այս տարածքում հայկական ազգային օջախի պահպանման հնարավորություն ընձեռող միջոցներ»:
Արմեն Հովհաննիսյան. «Հեղափոխություն հանուն պահպանման», էջ 54:

եւ քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ ամենայն Հայոց աշխարհիս:

[13] Տպագրության գյուտից գրեթե անմիջապես հետո հայերն օգտվեցին դրանից և հայոց պատմության ամենամութ դարաշրջանում գրքեր էին տպագրում թուրքերից, վրացիներից, պարսիկներից ու ռուսներից դարեր առաջ: Բայց ահա ինտերնետային հեղափոխության այս օրերին նույն հայերն ամենահետամնացներից են. ինտերնետում ներկայացվածության առումով հայերենը զիջում է բոլորին, ոչ միայն ռուսերենին, անգլերենին կամ նույնիսկ թուրքերենին, այլև վրացերենին, ադրբեջաներենին, քրդերենին... Մինչդեռ Լենկ Թեմուրի արշավանքների օրոք հայերն Արիստոտել էին մեկնաբանում: Իսկ մերօրյա ստալինյան մտավորականությունը, երեք տարի (1992-1995թթ.) առանց լույսի նստելով, այն էլ ոչ թե հանուն Լենկ Թեմուրի, այլ, իբր, այդքան սիրված ու փայփայված Հայաստանի ու Արցախի, մինչ օրս բողոքում է, թե այդ պատճառով չի կարողանում ստեղծագործել: Մտավորականը, տեսեք-տեսեք, չի կարող ստեղծագործել սոցիալական ծանր պայմաններում: Դե իհարկե, Ստալինը նրանց առանձնատներ բաժանեց Չարենցին և Բակունցին ուրանալու դիմաց, և հիմա, առանց առանձնատան, չեն կարող ստեղծագործել. Բոդլերն ու Մոցարտն աղքատության մեջ մահացան, սակայն մինչև կյանքի վերջ ստեղծագործեցին, Սերվանտեսը բանտում էր գրում, մեր արժեքավոր գրողներն ու գործիչները նույնպես պալատներում չէին ապրում: Իսկ ստալինյան փափկասուններն իրենց ամլությունն ու անիմաստությունը մինչև հիմա «ցուրտ ու մութ»-ի մուղամով են փորձում արդարացնել: